ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել պարտադիր քննարկման ենթակա հետևյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց	Կ-**036**-01.03.2019- Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
2.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների մասին» կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդում	**425**-08.01.2019-ՊԻ

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած հետևյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին	Խ-**004**-17.01.2019,**26.02.2019**-ՊԱ-011/0 Հեղինակ՝«Լուսավոր Հայաստան» խմբակցություն
2.	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին	Պ-**005**-18.01.2019-ԳԿ-011/0 Հեղինակ՝ Տիգրան Ուրիխանյան

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել գլխադասային հանձնաժողովների կողմից բացասական եզրակացություն ստացած, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չստացած հետևյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին	Խ-**001**-16.01.2019-ՊԻ-011/0 Հեղինակ՝«Լուսավոր Հայաստան»

		խմբակցություն
2.	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին	Պ-**003**-16.01.2019-ՊԻ-011/0 Հեղինակ՝ Նաիրա Զոհրաբյան
3.	«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին	Պ-**006**-23.01.2019-ՄԻ-011/0 Հեղինակներ՝ Գեւորգ Պետրոսյան, Նորա Առուստամյան, Վարդան Ղուկասյան, Արթուր Գրիգորյան, Հրանտ Մադաթյան